

Գ Ա Ր Բ Ա Ն Գ .

Կովկասեան աշխարհին եւ բոլոր Ասիոյ հռչակաւոր տեղերէն մէկը Գ Ա Ր Բ Ա Ն Գ քաղաքն է՝ Կասպից ծովուն վրայ, բարձրագիր, ամբարաբիսպ ու վաճառաշահ: Բնակիչը հինգ հազարի չափ կհամրուի, մեծ մասը Թիւրքմէն: Կրտսելի թէ այս քաղաքը հիմներ է Մեծն Աղեխասկոյ, եւ ամուր պարսպով մը պատեր է, որ մինչեւ ցայժմ կեցած է ըստ մասին, եւ նայողներուն վրայ սարսափ կձգէ իւր բարձրութեամբն ու ահագին ընդարձակութեամբ: Եւ որովհետեւ այն պարսպին մեծամեծ գոններն երկրթէ էին, սովորութիւն եղեր է քաղաքին եւս Տեւիս-գախու (Դուռն երկաթի) անունը տալ:

Դարբանդը, ինչպէս որ մեր գրած պատկերին մէջ եւս կերելի, լեռան վրայ շինուած քաղաք է՝ նեղ փողոցներով, եւ ճերմակ տըները ետեւէ ետեւ աստիճան աստիճան երեւնալով ծովէն՝ շատ գեղեցիկ տեսք մը կուտան անոր: Վաճառականութիւնը օրէ օր ծաղկելու վրայ է, մանաւանդ Աթուէրխան երթեւեկութիւն ընող շոգեհաւերուն բանե-

լէն իվեր. իսկ գլխաւոր ապրանքներն են մետաքս (խորիշիւ), քրքում (ասիւս), տորսն (սոֆ պոյս), եւ այլն:

Դարբանդը գլխաւոր քաղաքն է Տարսուս ըսուած երկրին, որ Կովկասին արեւելեան մասն է, եւ անուանը պէս լեռնային աշխարհ մի է, որոյ բնակիչներն են Լեզկիի եւ ուրիշ Կովկասային պատերազմող ազգեր: Սոցա գըլխաւորն էր Շամիլ, որոյ պատմութիւնը յայտնի է ընթերցողաց. եւս առաւել յայտնի եւ սիրելի է ամենայն Հոյ մարգու Տաղստանի քաջակորով եւ մեծանուն դիւցազնը՝ հանգուցեալ Մովսէս Զաքարեան Արդուրեանց, որոյ վրայ ընդարձակ տեղեկութիւն տալու յոյս ունիմք յետ սակաւ ժամանակի:

Արդութեանց իշխանին պաշտօնը կվարէ այժմ այն կողմերը ուրիշ նոյնպէս քաջահամբաւ հայկազն զօրավար մը՝ որ իւր իմաստութեամբը՝ քաջութեամբն ու ազգասիրութեամբը ծանօթ է արգէն թէ Հայոց եւ թէ օտարաց, այն է Միխայիլ Տարիելեան Լոռու-Մելիքեանց զօրապետը:

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք .

ԾԱՌ ԶՐԵԼՈՒ ՆՈՐ ԿԵՐՊ .

Քալիֆոռնիոյ բնակիչ ձօն Քէրի ամերիկացին այս դիւրին՝ աժան եւ բաւական ճարտար հնարքը գտեր է ծառերուն ջուր տալու: Ծառին բովը դոյլով կամ ինչ եւ իցէ ամանով մը ջուր կընէ. ծառին վարի կողմը, ջրին երեսէն քանի մը մատնաչափ վար շտկուեամբ չուան մը կփաթթէ երկու անգամու այն չուանին երկու ծայրերը ջրին մէջ կծգէ: Յայտնի բան է որ այս կերպով չուանը սիփոնի գործողութիւնը կկատարէ, այսինքն ջուրը անդադար ծծելով՝ ծառին կհաղորդէ, եւ այնպէս ծառին բունն ու արմատը միակերպ խոնաւութեան մէջ կգտնուին:

Այս կերպով ծառ ջրելուն մէկ օգուտն ալ այս է որ վնասակար ճճիներէն կպահպանուի ծա-

ռին կեղեւը: Իհարկէ ատեն ատեն ամանին մէջ պակասած ջրին տեղը ջուր լեցընելու է:

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԵՂԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ .

Կէսնէր անունով մէկը Լոնտոնի երկրաբանական ընկերութեան այս օգտակար տեղեկութիւնս տուեր է թէ Հիւսիսային Ամերիկայի շատ գաւառներուն մէջ հանքային եղի աղբիւրներ բացուեր են, եւ հետ զհետէ կբացուին. այնպէս որ նորա հաշուովը այժմ այն տեղ ամէն օր 200 հազար լիտրէն աւելի վառելու եղ կենէ: — Մոնաէալ քաղաքին լուսաւորութեան կազմ այն եղէն կհանեն. հաւանական է որ քիչ ժամանակէն ուրիշ տեղեր ալ տարածուի, արդէն Անգղիա 20 հազար տակառէն աւելի բերուեր է այն եղէն այս տարի:

ՀՐԱՄԱՆԱՒ ԳՐԱԳՆՆՈՒԹԵԱՆ . ԻԹեղոսիա, Խ26 Օգոստոսի 1862.

ԻՏպարանի Խալիպեան Ուսումնարանի ազգիս Հայոց: